

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

3

ԱԻԵՏԱՐԱՆ

Հիմ Բիւ Ժ • ՌՃԺԶ — 1667

Փառք... Արդ զբեցաւ ի տիրապահ եւ հռչակաւոր քաղաքս որ կոչի Ս. Ֆայհուն, ձեռամբ Արիստակէս զբռնի, ի դուռն սուրբ Աստուածածնի, ի թվարերութեանս Հայոց ՌՃԺԶ ամին, նորոգեցաք սուրբ (գիրքս) ի հայրապետութեան սուրբ էջմիածնի տեառն Յակոբ կաթողիկոսի: Եւ երջանիկ ըարունապետն մեր Դաւիթ վարդապետին: Դարձեալ յիշեցէք Պարոն Գեղարիկ, Աստուած պահի իւր եղբայր Յայրապետն, որ կամակից եղաւ սորա նորոգութեան, եւ զուք յիշեալ լինիք ի Բրիստոսէ մերմէ:

8

ՄԱՏԹԵՈՍԻ ԶՈՒՂԱՅԵՅԻՈՅ

ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՅ ԱՌԱԳԵԼՈՅ

Հիմ Բիւ ԼԲ • ՌԽԹ — 1600

Փառք եռակի տէրութեան... որոյ յոյժ սիրով եւ փափազանօք ցանկացօլ եղեւ (զբոցս), երկցս երանեալ տիեզերալոյս Յովանէս քաջ հռետորն, որ ետ զբել զսա իւր յիշատակ յաւիտենական, ի վայելումն անձին իւրոյ, եւ ի վարժ կրթութեան աշակերտեալ մանկանց իւրոյ. զոր Տէր Աստուած վայելել տացէ բազմերամ կենօք եւ յամբարամ ժամանակօք, միշտ արածել իրբեւ զԺրաջան մեղու ի աստուածային բուրաստանս ժողովել զծաղիկս իմաստից եւ քաղցրացուցանել զքիմս մտաց փափագողաց բանին կենաց, առատաբուղին հոգին Աստուած անսպառ պահեացէ եւ զաղբիւրս այս յաւիտեանս. ամէն:

Արդ եղեւ զբաւ զբռնութեան սորա ի թուականութեանս Հայոց ՌԽԹ, ձեռամբ փծուն եւ անարհեստ զբռնի Յակոբ դպրի, ընդ հովանեաւ երկնահանգէտ մեծարգոյ(յ) զերահռչակ սուրբ ուխտիս Հրեշտակապետք կոչեցեալ Հրեշտակարնակ սուրբ մենաստանին, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս եւ վերադիտողի Սեփաստիոն(յ) նահանգին Յոհանէս քաջ ըարունապետին եւ սուրբ փաղերային (?) , մեր աստուածաբան ծնողին, զբոցս ստացողին: Որ է այժմ կրկին լուսատու Հայկազեան սեռից եւ նորոգ լուսաւորել, որ փայլէ արեգակնաշման ի մէջ աստղափայլ ըրգմութեան կրօնաւորաց: Եւ իրբեւ զծառ

տնկեալ ի զնացս վտակաց Հոդոյն, ունելով յինքն զծաղիկս անուշա-
հոտ եւ զպտուղս քաղցրահամ, զաշակերտեալ մանկունս եւ զվարդա-
պետական խումպս առ ինքն հաւաքեալ ծանրաժամատեղօք եւ մեծ
սեղանատեղօք, քաղցրաձայն փիլիսոփայիւք եւ աշակերտօք եւ այլ
բաղմութեան դործաւորացս եւ սարկաւազացս, որ կան ժողովեալ ի
քաղցրութիւն մեծ վարդապետին, որ եւ հաստատուն պահեսցէ Քրիս-
տոս Աստուած մեր, խաղաղական կենօք զվարդապետս, հանդերձ հնա-
ղանդեցելովք պարագայց ամօք ընդ երկայն աւուրս. ամէն:

Արդ եւ ես անպիտան Հոդս եւ մոխիր, ծառայ(յ) ծառայից Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի Յակոբիկս, որ եմ յերկրէն Գերմանիկոյ,
որ է Մարաշ, եւ ի զիւղաքաղաքէն Զեթունայ, որ եկի ի Սեւաստ, եւ
էի զարիւպ եւ տրտմեալ ոգով, անմեղադէր լերուք սղալանաց եւ չղա-
զրութեան սորա, եւ շուտով զրեւ երես վարդապետն զգիրքս, որ եր-
կու օրն տեսր մի հանէի: Վասն որոյ աղաչեմ յիշել ի մաքրափայլ ա-
ղօթս ձեր զիս զանպիտան ծառայ ձեր զեղիկի Յակոբս, եւ զդեռա-
բոյս որդեակն իմ զՅովանէսն, եւ ողորմի ասացէք ծնողաց իմոց Յո-
վանիսին եւ Սաււային եւ իմ արեամբ մերձաւորաց իմոց: Եւ ուսու-
ցանողին իմոյ Զեթունցի Վահան երիցու, որ բազում աշխատութեամբ
ուսոյց զիս զանարժանս, զտրուպս, զյետնեալս ի յուսումնասիրաց:
Եւ զմիւս վարդապետն իմ Մարտիրոս էրէց Հիզանցի, որ աշխատեցաւ
ի յուսուցանել զծաղիկն եւ զոսկին, Աստուած փոխարէն տացէ իւր
զերկնից արքայութիւնն. ամէն:

Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զհամշիրակ եւ զհամտէղէկ վեր-
ջութեան զեղբայրն իմ զԱլիքսիանոս զպիրն, որ զմի մասն նա գրեաց
եւ ի միասին եղաք. եւ որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ
մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Բողոք ստացողիս: Արդ եւ ես անպիտան Հոդս եւ մոխիրս ծա-
ռայ(յ) ծառայից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Յովանէս վար-
դապետս Անթափից անմամբ եւ վարժամամբ կիլիկիցի, որ եմ պան-
դըխտացեալ նշտահութեամբ յերկրիս Սեփաստէի, որ եւ վաղուց հետէ
մեղաքէի այս սուրբ ծաղկաւէտ բուրաստանիս, պարզեւեաց զսա
մեղ Աստուած սուրբ Հոգին. եւ զօրինակագրել տուաք յիշատակ մեզ
եւ ամենայն երախտաւորաց մերոց. վասն որոյ աղաչեմ եւ արտաա-
ուօք պաղատեմ առ պատահեալ եղբայրութիւնսդ մեր եւ որդեա-
ցեալդք մեր, ո՞վ դասք լուսերամից եւ խումբք սրբաղանից, որք պա-
տահիք յայսմ տառիս ընթեռնելով կամ օրինակելով, յիշեսցիք ի մա-
քրափայլ աղօթս ձեր զմեղօք պաշարեալ ոգիս, եւ զծնօղսն իմ զհո-
գեւոր եւ զմարմնաւոր: Զճայրն իմ զՅակոբ, եւ զմայրն իմ զԹամա-
մին, եւ այլ ամենայն արեամբ մերձաւորսն իմ զկենդանին եւ զնըն-
ջեցեալսն: Այլ եւ զաստուածագութ ծնօղսն իմ եւ զառաջին դաստիա-
րակ անուցիւսն իմ զտէր Խաչատուր կաթողիկոսն, որ երաժշտական

կրթմամբ վարժեաց զմեզ: Նաեւ զմեծ վարդապետն տէր Աստուածատուր Սեփաստացի, որ ի վարդապետական ուսումն հրաւիրեաց զմեզ բաղում աշխատութեամբ: Այլ եւ դաշտմու լուսատուն իմ տիեզերալուր եւ զբազմահամբաւ, զպայծառ Զահն եկեղեցւոյ զտէր տէր Աղարիա կաթողիկոսն Սըռոյ, որ ի վարդապետական շնորհս մեծարեաց զմեզ: Այլ եւ զսիրանունդ հոգեւոր որդեացեալն իմ եւ ըստ մարմնոյ որդիք հօրեղբոր իմոյ Վարդանայ, զտէր Դանիէլ աշակերտեալն իմ, եւ զեղբայր նորին զԱլիքսանոս, որ զմեկնիչ քաղուածոյք զործոցն գրեաց: Այլ եւ զհոգեւոր երկամբք ծնեալ մանկունս իմ եւ զաշակերտեալն մեր ի կրթարանս աստուածային գրոց, զՅակոբ ճըզնասէրն եւ զՄեղքիսեթ եպիսկոպոսն եւ զՊաւղոս եպիսկոպոսն, եւ զՄեսրոպ շնորհօք զարդարեալն ի յԱստուծոյ՝ աղաչեմ յիշել ի Տէր, եւ Աստուած ողորմի սասել. եւ Տէր Աստուած ձեզ յիշողացդ եւ ողորմի ասողացդ ողորմեսցի իւր միւսանդամ գալստեանն. ամէն:

17

ԱՒԵՏԱՐԱՆ

Հին քիւ ձեԱ. ՌՂԴ - 1645

Փառք...: Արդ գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՂԴ, ի գրչի ձեռամբն զպիր Մարգարի, ի գեօղն Զուղայ, ի խնդրոյ հաւատարիմ քրիստոնեայ Աղէ, որ է որդի Մէլիք Աղէ: Որ ստացաւ զսա վասն վախլումն հաւատոյ եւ ուղղափառութեանն իւրոյ ուսանել ի սմանէ բան ճշմարտութեան, որով Տէր Աստուած անփորձ պահեսցէ զինքն եւ անսասան յաւիտենից. ամէն:

Դարձեալ յիշատակ է սուրբ զերքս ստացող գրոյս Պարոն Աղա Պաչիկին եւ ծնողաց իւրոց Պարոն Մէլիք Աղէ նաչխունին, եւ եղբարցն իւրոց Միքայէին, Սինանին, Բաղումին, Մէլիքնիպղին, եւ քւերքն Սօլթափաչին. ամէն:

Դարձեալ յիշատակ է ստացողի սորին Պաչիկ աղայ անորդի, եւ կողակցին իւրոյ Սապրիխանին, եւ եղբօրն իւրոյ Սինանին եւ կողակցին իւրոյ Մարիամին, եւ որդւոցն սոցա Մէլիքին, Պետրոսին: Բաղումի որդի՝ Թեւումին եւ դուստր Նաչխունին, աստէն եւ ի հանդերձեւումն. ամէն:

Այս գերքս Աղէ կին բարեմիտ եւ աստուածասէր Սապրիխանին է: Աստուած իւրն եւ իւր ծնողաց մեղքն թողցէ աստ եւ ի հանդերձեալ դատաստանի Յիսուսի Քրիստոսի. ամէն. ամէն: Հայր մեր:

Գրեցաւ զիրս թվն. ՌձԼԲ փոքր թվն. ԿԸ. դամայ ամսոյն Ա: Զապիկար եւ զանարժան եւեթ անուն տէր Յակոբ քահանայս, յիշեցէ ի Քրիստոս, որ գրեցի այս յիշատակարանս նիրհան ժղ:

19

ՇԱՐԱԿՆՈՑ

Հիմ Իլև ձևԼ. 22Գ - 1334

Փառք սուրբ երրորդութեանն եւ մի Աստուածութեան. ամէն :
Գրեցաւ տառս ի թու. Հայոց 22Գ, ի թագաւորութեանն Հայոց
Լեւոնի աստուածասիրի եւ բարեպաշտի որդւոյ ի Քրիստոս Աստուած
հանդուցեալ արքայի Աւչնի, եւ ի հայրապետութեան Տեառն
Յակովբայ, ի յանապատս որ կոչի Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի
եւ այլ սրբոց որք աստ. ձեռամբ մեղաւոր եւ անարժան
Գրիգորի զպրի, ի խըն(դ)րոյ պատուական եւ հոգեւոր եղբաւր մե-
րոյ Կոստանտին զըպրի, ի վայելումն անձին իւրոյ եւ ի յիշատակ
հոգւոյ իւրոյ եւ ծնաւդաց իւրոց եւ ամենայն զարմից :

Արդ աղաչեմ զամենեւեան որք աւգտիք ի սմանէ, յիշեսցիք զըստացաւ
զըրոցս զիոստանդ զպրի, եւ զծնաւդսն իւր զկենդանիս եւ
զհանդուցեալսն : Ընդ նմին աղաչեմ յիշել եւ զիս զանպիտան զրիչս
զԳրիգորս եւ զծնաւդս իմ. եւ խոշորութեան զրիս եւ սխալանացս որ
ի սմա, անմեղադիր լերուք, զի այսչափ էր կար մեր, եւ Աստուած
յիշողացդ եւ յիշելոցս առ հասարակ ողորմեցի. եւ նմա փառք յաւիտեանս
ամէն : Բայց ով հոգեւոր եղբայր իմ, լլ :յյ :ռւ :սս :մմ :րր :
ժժ :մմ : (կոստնդին), ընկալ զինգիրս քո բաղում աշխատութեամբ
ի նուաստ ու :ժժ :ճճ :զզ :յյ :մմ :րբ : (Սիմէոնէ), եւ անմոռաց յիշեալ
ի յաղթս Աստուած ողորմեայիւ, զի եւ Տէր զքեզ յիշեսցէ եւ նմա
յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն :

Ընդ նմին զբաղմամեզս զՍարգիս սուտանուն քահանայ, եւ զծն. իմ
եւ զամենայն արեան մերձաւորս իմ աղաչեմ յիշել ի Տէր, զմաղ-
կաւդ սուրբ տառիս եւ զոսկաւդ, եւ որ զմեզ յիշէ՝ Քրիստոս զինք
յիշէ յիւր արքայութիւնն. ամէն :

23

ՇԱՐԱԿՆՈՑ

Հիմ Իլև ձևԳ. Ռև - 1591

Փառք ամենասուրբ երրորդութեանն եւ միասնական աստուածու-
թեանն անեղին եւ անսկզբնականին, երբեակ միակին եւ միակ եր-
բեակին, անբաժանելի եւ համագոյ տէրութեանն Հաւր եւ Որդոյ եւ
Հոգւոյն սրբոյ, այժմ եւ անդրաւ յաւիտեանս յաւիտենի(ց). ա-
մէն :

Զիւրկին ստացող լուսազարդ զըրոցս, զառաքելաշնորհ եւ զպատ-

ուսական հայրապետն զտէր Դաւիթն զպանծալի եւ զչքեղաշուք աթոռակալ սուրբ դամբարանին Յակոբայ ի սուրբ քաղաքս Երուսաղէմ : Նաեւ զծնողսն իւր զՅովհաննէսն եւ զՂամարն, աղաչեմ յիշել ի Տէր Աստուած, որ ստացաւ զսա զլուսատու ակնս եւ զվարդափթիթ բուրաստանս, եւ ետ նորոգել զսա զծաղիկն զամենայն, զի դեղորունքն տնվայելուէ էր եւ ոսկին նուազ : Ետ կրկին անգամ նորոգել զսա տէր Դաւիթ արքեպիսկոպոսն եւ եղ յիշատակ բարի լւրն եւ իւր ծնողացն Յովանէսին եւ Ղամար խաթունին, եւ հօրեղբարցն տէր Անդրէաս եւ տէր Աստուածատուր արքեպիսկոպոսացն, եւ իւր եղբարցն տէր Կիրակոսին եւ Զաքարիային, եւ տէր Կիրակոսին որդւոցն՝ Նիկողայոս սարկաւազին եւ այլոցն : Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք տէր Դաւիթ արքեպիսկոպոսին եւ իւր ամենայն մերձաւորացն :

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զլուսատու ակն, զպաղատու ձիթենին, զքաղցրապտուղ արմաւենին, զամենիմաստ հանճարեղն եւ զքաջ գիտնական զտէր Դաւիթ արքեպիսկոպոսն, որոյ համբաւ գիտութեան նորա եւ քաղաքավարութիւն եւ քաջ իմաստութիւնն հոգակեալ է ընդ ամենայն ազգս Հայաստանեայց, եւ ոչ միայն ընդ ազգս Հայոց, այլ ի մէջ ամենայն համբաւեալ է խոնարհութիւն եւ գիտութիւն նորա, զոր եւ հայցեմք յամենազաւր եւ յամենառատ արարչէն, որ խաղաղութեամբ պահեսցէ ի պարծանս մեր եւ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ մերոյ. ամէն :

Եւ արգ ես անյիշելիս ի զըջաց սուտանուն Մարտիրոս Հիղանցիս, հանդիպեցայ ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ես եւ քրտորորդին իմ եւ ծաղկեցաք զսա, զոսկին զզրերն զամէն, եւ զծաղիկն զխորաներն եւ զփոկերն ոսկի դրան, եւ զծաղիկն զամէն նորոգեցաք կրկին ի թվականին Հայոց ի հաղար եւ քառասուն, ի վայելումն տէր Դաւիթ արքեպիսկոպոսին եւ իւր եղբորորդւոյն Նիկողայոսին, որ այս տարի մի բոլոր է որ զմեզ կու կերակրէ Դաւիթ պարոնտէրն զանազան խորտրկաւք եւ անուշահամ գինով, ըստ անարժանութեանս մերում, քան զչափն աւելի զմեզ հարկէր ու մեծարէր պատուէր եւ փառաւորէր, Աստուած իւրն վարձահատոյց լինի աստ եւ ի հանդերձեալ դատաստանին. ամէն : Արդ որք հանդիպէք տեսութեան սորա, ինձ անարժանիս Աստուած ողորմի ասացէք եւ ծնողաց իմոց Սար... :

24

ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆԻՔ

Հիմ քիւ ձկն. 249 - 1324

Փառք ամենասուրբ Երրորդութեան եւ մի Աստուածութեան Հաւր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն, այժմ : Գրեցաւ տառս ձե-

ռամբ Ստեփանոսի վանական քահանայի ի թուիս Հայոց ՁՀԳ, ի յանապատս որ կոչի Բլբլի, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգայ զաւարովարի, ի թագաւորութեան Հայոց՝ բարեպաշտին Լեւոնի, եւ ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ, ի վայելումն ներսեսի վանական քահանայի, որ է մանուկ հասակաւ եւ կատարեալ առաքինութեամբ:

Արդ աղաչեմ զամենեւեան որ աւելիք ի սմանէ, յիշեսցիք ի Քրիստոս զստացաւդ սորին զսրբահոգի եւ զառաքինաջան խոտակրաւն քահանայն զՆերսէս, եւ զծնաւդս իւր հանդուցեալսն ի Քրիստոս, եւ զբերին իւր զճանապարհս քահանայն զՎարդայն, եւ զամենայն ազգատոհմ իւր զկենդանիս եւ զհանդուցեալսն, եւ զՍտեփանոս քահանայ զգրիչ սորին, եւ զրազմամեղս Գրիգոր, որ զլիշատակարանս զրեցի, յիշման արժանի առնել աղաչեմ. եւ Աստուած որ առատն է ի տուրս բարեաց ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեցել այժմ եւ աներեկ առւերն եւ նմա վառք յաւիտեանս. ամէն:

Ընդ նմին եւ զիս զանարժան քահանայս զՍարգիս եւ զհանդուցեալ հայրն իմ զԳրիգոր քահանայն եւ զծնոյն իմ, աղաչեմ յիշել ի Տէր, որ ծաղկով զարգարեցի զսա:

26

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Հիմ Իիւ ձկը. ՌձԻԳ - 1674

Փառք...: Արդ եղաւ զբաւ սորա ի մայրաքաղաքն ի յԱտանայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Ստեփանոս եկեղեցեացն, ի թվականիս մերում ՌձԻԳ: Արդ զրեցաւ սուրբ մատեանս ի հայրապետութեան Տեառն Խաչատուրին, ձեռամբ անարհեստ եւ անիմաստ Սարգիս զպրի Ատանացոյ: Արդ յիշեցէք ի սուրբ աղօթմ ձեր ըզԶիլինկիլի որդին զվարակտ Անդրիասին, որ եւ վախազանաւք ետ զբել մեղաւորիս, իւր զեռարողորջ անդրանիկ մանկանն տրեացու Ղահլըին, զոր Տէր Աստուած տայ շնորհս իմաստութեան, որում բաւով վայելել տացէ մինչեւ ի խորին ծերութեանն. ամէն:

Եւ արդ աղաչեմ զձեզ ով սիրելի հարք եւ եղբարք իմ, յորժամ ընթեռնուք կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զՍարգիս զրիչս եւ զհայրն իմ զՂարաբեկն, Աստուած ողորմի առելով եւ մեր մեղացն թողութիւն խնդրելով, եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զձերն եւ զձեր ննջեցելոց մեղացն թողութիւն շնորհեցէ եւ քաղցր բարբառոյն արժանի արասցէ: